

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը հեռուստատեսության միջազգային օրվա կապակցությամբ

Ջերմորեն շնորհավորում եմ Սյունիքի մարզի հեռուստաընկերությունների բոլոր աշխատակիցներին՝ համաշխարհային ամենամեծ լսարան ունեցող զանգվածային լրատվամիջոցի՝ հեռուստատեսության միջազգային օրվա կապակցությամբ:

Վաղուց արդեն հեռուստատեսությունը դարձել է հասարակական կարծիքի ձևավորման, ներքաղաքական գործընթացների վրա ներազդման, խաղաղության ու անվտանգության, մշակութային երկխոսության ու հանդուրժողականության ձևավորման անփոխարինելի միջոց ողջ աշխարհում:

Այդպես է և մեզանում:

Այս առումով, վերստին կարևորում եմ ձեր դերը ոչ միայն որպես մարզի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և կրթամշակութային կյանքի կարևորագույն իրադարձությունների տեղեկատվության աղբյուրի, այլև որպես այդ ոլորտներում առաջընթացի բարերար ազդակի:

Մաղթում եմ բոլորիդ առողջություն, ընտանեկան երջանկություն ու նորանոր հաջողություններ ձեր պատասխանատու և ստեղծագործ աշխատանքում:

Հարգանքներով

ՀՀ Սյունիքի մարզպետ



Սուրիկ Խաչատրյան

21 նոյեմբերի 2012թ.